

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 07
վիճակագրության պետական խորհրդի նիստի

10.06.2009թ.

ժ.11: 00

Մասնակցում էին՝

Ս.Մնացականյան (*խորհրդի նախագահ*), Գ.Անանյան, Գ.Գևորգյան, Յու.Պողոսյան, Ա.Շաբոյան, Ս.Դավթյան, Ա.Աղազարյան (*խորհրդի անդամներ*)

Հրավիրված էին՝ Լ.Միրզոյան (ՀՀ ԱՎԾ նախագահի տեղակալ), Լ.Պետրոսյան (վիճակագրական աշխատանքների մեթոդաբանության և դասակարգիչների բաժնի պետ), Ս.Պողոսյան (իրավաբանական բաժնի պետ), Ա.Սաֆյան (միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի պետ), Դ.Մարտիրոսովա (տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնի պետ), Լ.Քալանթարյան (աշխատանքի վիճակագրության բաժնի պետ), Հ.Եղիազարյան (միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի առաջատար մասնագետ), Վ.Ավետիսյան (Երևան քաղաքի գործակալության պետ):

Օրակարգի նախագծում՝ հինգ հարց.

1. «Հայաստանի Հանրապետության 2010-2012 թվականների պետական վիճակագրական աշխատանքների եռամյա ծրագիր, ՀՀ օրենքի նախագիծը հաստատելու մասին» հարցը:
/Ձեկուցող՝ Լ. Պետրոսյան/

2. «ՀՀ վիճակագրության պետական խորհրդի 2008թ. հունիսի 2-ի Արժույթի միջազգային հիմնադրամի «Տվյալների տարածման հատուկ ստանդարտի», «Տվյալների որակի գնահատման շրջանակի» պահանջներին համապատասխան մշակված մեթատվյալների հաստատման վերաբերյալ թիվ 17-Ա որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» հարցը:
/Ձեկուցող՝ Լ. Պետրոսյան/

3. «Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից՝ 2006 և 2007 թվականներին իրականացված տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտությունների անվանագրքով տվյալների բազաները տնտեսագիտական գիտությունների պրոֆեսոր Կարինե Թորոսյանին տրամադրելու թույլտվության մասին» հարցը:
/Ձեկուցող՝ Դ. Մարտիրոսովա/

4. Հաղորդում արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին.

4.1. Հաղորդում Գրղգստանի Հանրապետությունում 21.04.-23.04.2009թ.տեղի ունեցած «Մանկական աղքատության համաշխարհային ուսումնասիրություն» թեմայով աշխատանքային հանդիպմանը մասնակցելու վերաբերյալ:
/Ձեկուցող՝ Դ. Մարտիրոսովա/

4.2. Հաղորդում Վրաստանի Թբիլիսի քաղաքում 04.05-05.05.2009թ. տեղի ունեցած «Պաշտոնական վիճակագրության բարեփոխումները Հայաստանում, Ադրբեջանում և Վրաստանում» խորագրով եզրափակիչ համաժողովին մասնակցելու վերաբերյալ:
/Ձեկուցող՝ Ս.Մնացականյան, Ա.Շաբոյան, Վ.Ավետիսյան, Լ.Քալանթարյան, Ա.Սաֆյան/

4.3. Հաղորդում Նորվեգիայի Օսլո քաղաքում 18.05-20.05.2009թ. տեղի ունեցած «Վիճակագրական տեղեկատվական համակարգերի (MSIS2009) կառավարում» թեմայով UNECE/Եվրոստատ/OECD համատեղ աշխատանքային հանդիպմանը մասնակցելու վերաբերյալ:
/Ձեկուցող՝ Վ. Դավթյան, Հ.Եղիազարյան/

5. Այլ հարցեր:

ՀՀ վիճակագրության պետական խորհրդի նախագահի կողմից ներկայացվեց խորհրդի նիստի օրակարգի նախագիծը, որը հաստատվեց ամբողջությամբ և միաձայն:
/Քվեարկության արդյունքները-կողմ՝ 7, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

Լսեցին՝

1. «Հայաստանի Հանրապետության 2010-2012 թվականների պետական վիճակագրական աշխատանքների եռամյա ծրագիր, ՀՀ օրենքի նախագիծը հաստատելու մասին» հարցը:
/Զեկուցող՝ Լ. Պետրոսյան/

Որոշեցին՝

հաստատել «Հայաստանի Հանրապետության 2010-2012 թվականների պետական վիճակագրական աշխատանքների եռամյա ծրագիր» ՀՀ օրենքի նախագիծը՝ համաձայն հավելվածի:

/Անհատական/

/Զվեարկության արդյունքները- կողմ՝ 7, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

2. «ՀՀ վիճակագրության պետական խորհրդի 2008թ. հունիսի 2-ի Արժույթի միջազգային հիմնադրամի «Տվյալների տարածման հատուկ ստանդարտի», «Տվյալների որակի գնահատման շրջանակի» պահանջներին համապատասխան մշակված մեթատվյալների հաստատման վերաբերյալ թիվ 17-Ա որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» հարցը:

/Զեկուցող՝ Լ. Պետրոսյան/

Որոշեցին՝

հաստատել Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2008թ. հունիսի 2-ի «Արժույթի միջազգային հիմնադրամի «Տվյալների տարածման հատուկ ստանդարտի» «Տվյալների որակի գնահատման շրջանակի» պահանջներին համապատասխան մշակված մեթատվյալների հաստատման վերաբերյալ» թիվ 17-Ա որոշման հավելվածով հաստատված մեթատվյալներում կատարված լրացումները և փոփոխությունները (համաձայն կից ներկայացվող հավելվածի):

/Անհատական/

/Զվեարկության արդյունքները- կողմ՝ 7, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

3. «Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից՝ 2006 և 2007 թվականներին իրականացված տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտությունների անվանագրքով տվյալների բազաները տնտեսագիտական գիտությունների պրոֆեսոր Կարինե Թորոսյանին տրամադրելու թույլտվության մասին» հարցը:

/Զեկուցող՝ Դ. Մարտիրոսովա/

Որոշեցին՝

թույլատրել Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմի տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնին՝ տնտեսագիտական գիտությունների պրոֆեսոր Կարինե Թորոսյանին տրամադրել Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից 2006 և 2007 թվականներին իրականացված տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտությունների արդյունքում ձևավորված անվանագրքով տվյալների բազաները՝ զուտ գիտահետազոտական աշխատանքների իրականացման համար օգտագործելու, այլ անձանց չփոխանցելու, չվաճառելու, չիրապարակելու և այլ կարգով չտարածելու պայմաններով:

/Անհատական/

/Զվեարկության արդյունքները- կողմ՝ 7, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

4. Հաղորդում արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին.

4.1. Հաղորդում Գրղզստանի Հանրապետությունում 21.04.-23.04.2009թ.տեղի ունեցած «Մանկական աղքատության համաշխարհային ուսումնասիրություն» թեմայով աշխատանքային հանդիպմանը մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցող՝ Դ. Մարտիրոսովա/

4.2. Հաղորդում Վրաստանի Թբիլիսի քաղաքում 04.05-05.05.2009թ. տեղի ունեցած «Պաշտոնական վիճակագրության բարեփոխումները Հայաստանում, Ադրբեջանում և Վրաստանում» խորագրով եզրափակիչ համաժողովին մասնակցելու վերաբերյալ:

/Ձեկուցող՝ Ս.Մնացականյան, Ա.Շարոյան, Վ.Ավետիսյան, Լ.Քալանթարյան, Ա.Սաֆյան/

4.3. Հաղորդում Նորվեգիայի Օսլո քաղաքում 18.05-20.05.2009թ. տեղի ունեցած «Վիճակագրական տեղեկատվական համակարգերի (MSIS2009) կառավարում» թեմայով UNECE/Եվրոստատ/OECD համատեղ աշխատանքային հանդիպմանը մասնակցելու վերաբերյալ:

/Ձեկուցող՝ Վ.Դավթյան, Հ.Եղիազարյան/

Որոշեցին՝

արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին հաղորդումներն ընդունել ի գիտություն

/Անհատական/

/Զվեարկության արդյունքները- կողմ՝ 7, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

5. Լսեցին ՀՀ ՎՊԽ անդամ Ս.Դավթյանի և ՀՀ ԱՎԾ աշխատակազմի միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի պետ Ա.Սաֆյանի տեղեկատվությունը՝ 2009 թվականի հունիսի 1-5-ը և 8-9-ը UNICEF-ի կողմից կազմակերպված սեմինարի ընթացքում ներկայացված (Dev Info 6.0) համակարգչային ծրագրի և դրա օգտագործման հնարավորությունների մասին:

Առաջարկվեց Ս.Դավթյանին մինչև ս/թ հուլիսի առաջին տասնօրյակը ծանոթանալ (Dev Info 6.0) ծրագրին և ՀՀ ԱՎԾ նախագահին ներկայացնել առաջարկություններ այն ՀՀ ԱՎԾ-ում ներդնելու նպատակահարմարության վերաբերյալ:

ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ

Ա. ԱՂԱԶԱՐՅԱՆ